218 Եղի՛ր ներող, օրհնի՛ր քեզ հալածողներին,

1. Եղի՛ր ներող, օրհնի՛ր քեզ հալածողներին,
Չարին հաղթիր սուրբ շողերով բարու
Եվ աներեր քայլիր ճամփով ներողների,
Քանզի Գողգոթայի լույսն է վառվում:

2. Եղի՛ր ներող, ներումը մեծ հաղթություն է,
Իսկ վրեժը՝ անզորության նշան,
Չներելը Աստծո դեմ թշնամություն է,
Անզեղջ սրտով կգնաս կորստյան:

3. Ներել սովորի՛ր այնպես, ինչպես շնչում ես,
Ինչպես ջուրն ես խմում, հացն ես ուտում,
Քանզի այն ժամանակ Աստված կլսի քեզ,
Երբ սրտիդ մեջ ներման լույսն է վառվում:

4. Եղի՛ր ներող, ներող՝ ոչ միայն խոսքերով,
Հապա ամբողջ հոգով և էությամբ,
Այդ ներումը ծնվում է սրտերում սիրող
Գիշերային աղոթքի հաղթությամբ:

5. Եղի՛ր ներող, ներման մեջ ուրախություն կա,
Մեծահոգությունն սպեղանի է,
Սուրբ արյունով բոլորի համար ներում կա,
Եվ ներողներին Աստված ներում է: